



ԿԱՊԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ /ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ/
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF KAPAN
КАПАНСКИЙ ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

ՀՀ Սյունիքի մարզ թ. Կապան, Գ.Նժդեհի հեռ.09379-59-21 e-mail info_kapan@aarhus.am , kapan.aarhus@mail.ru

Կ N-001/14

<02 > 06 2014

ՀՀ Առողջապահության նախարարության
Առողջապահական պետական տեսչության
Սյունիքի մարզային կենտրոնի պետ
Լենա Մալինցյանին

Հարգելի տիկին Մալինցյան,

Կապանի Օրհուս կենտրոնը նամակ է ստացել ՀՀ Սյունիքի մարզի Լեոնաձոր համայնքի Բարեկավան թաղամասի 58 բնակիչներից, որոնց անհանգստացնում է թաղամասում ստեղծված հակասանիտարական վիճակը (չուրջ երկու տարի է կոյուղագծի խափանման պատճառով կոյուղու դիտահորից կեղտաջրերը դուրս են գալիս մակերևույթ, առաջացրել մեծ ջրափոս, հատել խմելու ջրի ջրազիծը): Դիմումը քննարկվել է Օրհուս կենտրոնի փորձագետների խորհրդում և ըստ ներկայացված Լճրակացությունների անհրաժեշտ է շտապ միջոցառումներ ձեռնարկել կոյուղագծի վթարը վերացնելու և հակասանիտարական վիճակը կանխելու վերաբերյալ:

Հետագյում հնարավոր համաճարակային վտանգներից խուսափելու նպատակով՝ խնդրում ենք տրամադրել մասնագիտական տեղեկատվություն, թե այս իրավիճակն ինչպես կարող է անդրադառնալ միջավայրի ու մարդկանց առողջության վրա, արդյո՞ք արդեն առկա է վտանգ, ինչպես նաև Ձեր միջնորդությունը՝ համապատասխան կառույցներին խնդիրը ներկայացնելու, ստեղծված իրավիճակը շտկելու և բնակիչներին օժանդակելու հարցով:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով՝  Աշոտ Ավակյան

Կապանի Օրհուս կենտրոնի համակարգող

 